

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ


Հայոց Լեոներից Սնունդ Առած Հսկան

ՈՒՒԼԵԸՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 20ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՄԱՐԻ ՌՈՋ ԱՐՈՒՍԷՖԵԱՆ

«Թէպէտ գրում եմ անգլերէն եւ ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ համարում եմ հայ գրող: Օղտագործած բառերս անգլերէն են, միջավայրը՝ որի մասին գրում եմ ամերիկեան է, սակայն այն ոգին, որն ինձ մղում է գրելու հայկական է»: այս խորքինակ յայտարարութեամբ համաշխարհային գրականութեան մէջ իր ինքնութիւնը հաստատեց իրապէս հայ ոգով մտածող, բայց անգլերէն բառերով այդ ոգին վերարտադրող Պիթլիսից Ամերիկա գաղթած՝ Արմենակ եւ Թագուհի Սարոյեանների որդի՝ Ուիլերմ Սարոյեանը, որի մահից արդէն անցել է 20 տարի: Սովորաբար այս տարիները բաւական են գրողի անմահութեան երթը ճշդելուն, սակայն Սարոյեան գրողի անմահութիւնը սկիզբ է առնում ոչ թէ իր մահից, այլ իր՝ որպէս գրողի՝ ծնունդից: Գրականութեան մէջ դժուար հանդիպէք մէկ այլ գրողի, որի լեզուն եւ ոգին՝ տարրեր լինելով հանդերձ, կարողանայ այդքան միաձոյց ասելիք ստեղծել, հետեւողականորէն պահպանել իր ազգային ինքնութիւնն ու պատկանելիութիւնը եւ ընդունելի դառնալ բոլոր ազգերի համար: Սարոյեանը առաջին եւ միակ օտար լեզուով ստեղծագործող հայ գրողը չէ, բայց եւ միակն է, որը օտար լեզուն օգտագործեց հայի մտածումների վերարտադրման համար:

Ի՞նչն էր Սարոյեան գրողի հմայքի ուժը, գաղտնիքը: Այն հասկանալու համար եկէք թերթներ իր կենսագրութեան ու ստեղծած գրականութեան էջերը: Պիթլիսից Ամերիկա գաղթած Սարոյեանների չորրորդ զաւակը ծնուել է 1908թ. Օգոստոսին Ֆրեդնոյում՝ ամերիկեան այն քաղաքում, ուր հաւաքուել էին իրենց ընտանիքի նման թուրքական անվերջանալի կոտորածներից փախած հայերը, որը գնալով մեծանում ու դառնում էր մի տեսակ հայկական գաւառ: Մնողները նրան կնքում են Ուիլերմ անունով ի յարգանք Ամերիկայում իր հօրը հովանաւորած մի պատուարժան պատուելու: Հետագայում նա գրելու է՝ «Եթէ




Ուիլերմ Սարոյեան Լուսանկարը՝ Փոլ Գալինեանի

անունս եւ ընտրելու լինէի, կարծում եմ, որ կ'ընտրէի Արամ անունը: Արամ անունը վաղուց ի վեր հայերի սիրած անուններից է: Որդուս անունը Արամ դրեցի, որովհետեւ այդ անունը համարում եմ իմ իսկական անունը»: Ընտանիքի միակ դուստրն է եղել, որ ծնուել է Ամերիկայում: Իր երկու քոյրերը ծնուել են Պիթլիսում, իսկ եղբայրը՝ էրզրումում: Երեք տարեկանին, Յեանայ հօր մահով, ապրուստի միջոց չունենալով, մայրը ստիպուած իրեն տեղաւորում է Օքլանտի որրանոցներից մէկում, ուր մնում է հինգ տարի: Պատկերացրէք, թէ որքան դժուար պիտի եղած լինէր երեք տարեկան հայ երեխայի համար այդ տարիները, երբ տաքուել, հարազատ հայկական ընտանիքից կտրել ու նետել են օտար որրանոց: Հետագայում նա իր գրականութեան նիւթ է դարձրել ու յաճախ անդրադարձել որրանոցում անցկացրած օրերին, նկարագրել այն սրտամաշ զգացումները, որն ապրել է ինքը դեռ երեխայ, տնից ու հարազատներից հեռու: «Որրանոցում, - գրում է նա, - եւ սովորեցի մէկ հիմնական բան՝ որ մեզինք իրաքանչիւրը իր միջոցներով է կազմում իր անհատականութիւնը եւ ցմահ պատասխանատու է այդ անհատականու-

թեան կերտման համար: Որրանոցում ցաւ կայ, իսկ ցաւը բացում է յիշողութիւնը: Երբ հօրը մահից յետոյ քեզ տանում են որրանոց եւ մայրը հեռանալուց հազիւ ասում է՝ -դու հիմա մեծ մարդ ես, ամօթ է լաց լինես, դու իսկոյն դադարում ես լացը: Յետոյ հսկիչը առաջնորդում է քեզ դէպի քո նեղիկ անկողինը, դա բացում է յիշողութիւնդ, ստիպում է քեզ ամուր լինել, որովհետեւ ահաւոր տխուր բան է դա: Իսկ եթէ հայրս կենդանի լինէր, միասին դրօսնելու, կամ ուտելու գնալինք, եւ չէի ձեւաւորուի այնտեղ, չէի յիշի այն, քանի որ այնտեղ ցաւ չկայ...»: Ութ տարեկանին մայրը նրան որրանոցից տուն է բերում, ուր ինչպէս ինքն է ասում՝ ճանաչում է երկու նոր բան՝ հայոց լեզուն եւ ազատութեան իմաստը:

Սակայն դժբախտաբար չի կարողանում երկար վայելել այն: Հազիւ մէկ շաբաթ հայկական դպրոց յաճախած եւ դեռ նոյնիսկ միջնակարգը չաւարտած, ստիպուած ապրուստի միջոց հայթայթելու հրամայականով, կէս է թողնում ուսումը եւ գնում է դրամ շահելու: Եղբոր հետ սկսում է թերթ վաճառել փողոցում: «Այդ ժամանակ եւ 8 տարեկան էի, եղբայրս՝ 12: Ուստիկանները յաճախ էին մեզ նեղում տարիքիս պատճառով: Ես այնքան էի վախենում, որ մինչեւ այսօր ուսականի մը տեսքը նեղութիւն կուտայ ինձի», պատմում էր նա: Այնուհետեւ աշխատում է Ֆրեդնոյի այգիներում, աշխատում է նաեւ որպէս հեռագրատան ցրիչ: Իր բախտը փորձելու համար հեռանում է տնից, գնում Լոս Անջելոս, նիւ Եորք, սակայն անյոջողութիւններից յուսահատ կրկին վերադառնում է տուն: Ընտանիքով տեղափոխում են Սան Ֆրանսիսքո: Գրող եւ անուանի դառնալու ցանկութիւնը այնքան մեծ եւ հրամայական է լինում իր համար, որ մերժում է ամէն տեսակի աշխատանք: Միայն երազում է գրող դառնալ ու իր օրերն անցընում է գրադարանում կարդալով, ուսումնասիրելով: «Ուսումս առի ուղղակի փողոցէն, բայց ես այն կոկեցի ու ամբողջացուցի այն գիրքերուն միջոցովը, դոր կարգացի կեանքիս ընթացքին», ամէնուրեք յայտարարել է նա: 26 տարեկանին սկսում է աշխատակցել հայկական «Հայրենիք» թերթի անգլիական բաժնին փորրիկ բանաստեղծութիւններ գրելով Վանայ լճին, Եփրատին նուիրուած, ստորագրելով Սիրակ Կորեան: Յետոյ սկսում է պատ-



մուսաօրները գրելու փորձը: Իր առաջին պատմուածքը «Կոտորուած անիւր», ուղարկուած է միւսնոյն ժամանակ Նիւ Եորքի «Սթորի Մէզըզինին», որից ստացուած 15 տոյար թուղթ ու մատիտ է գնուած եւ սկսուած աճէն օր մի պատմուածք գրել, երբեմն էլ մէկ ամսուած 36 պատմուածք գրել եւ ուղարկել Նիւ Եորքի Հրատարակիչներին երկու տարրեր անուններով՝ Սարոյեան եւ Սիրակ Կորեան: Այս վերջինը ընտրել էր ամբողջովին ու իրական Հայ լինելու Համար: Ըստ իր բացատրութեան, Սիրակը Հայ ընտանիքներու յաճախակի օգտագործուող անուն էր, իսկ Կորեան, որ Հայերէն նշանակուած էր կորիւն, տոխժի ձագ, միջնադարի մատենագիրներէից է եղել, որը գրել է ոչ թէ կրօնական թեմաներով, այլ կեանքի ու աշխարհի մասին: Այդ էլ գայթակղել էր նրան իր օտար անունը Հայացնելու Համար:

Նոյն թուին Հրատարակուած է

«Յանդուգն Երիտասարդը Թող Մարգաձողի Վրայ» պատմուածքներին ժողովածուն, որը միանգամից մեծ Հռչակ ու ճանաչում է բերում իրեն: Քննադատները անմիջապէս տեսնելով նրա ինքնատիպութիւնը միարեւրան յայտարարում են. «Յանձին Սարոյեանի, Սան Ֆրանսիսքոյում երեւան եկաւ ամենանշանաւոր գրողը Ջէկ Լոնտոնից յետոյ»: Այդ օրից սկսած նա իր ապրուստն սկսում է Հոգալ իր կոչումով՝ գրելով: Բնատուր ձիրքի ու դարմանալի կարգապահութեան շնորհիւ գրել է արագ, երբեմն օրը երեք պատմուածք աւարտելով: Իր Հանրաժանօթ վիպակներից «Մարդկային Կատակերգութիւնը» գրել է 11 օրում:

«Ես անՀանգիստ ոգի ունեւասում է նա, ուղում եմ, որ իւրաքանչիւր օրս նշանակալից դառնայ: Ձեռն ուղում նոյնիսկ մէկ օր անցկացնել տաւնց որեւէ բան անելու: Ես կարծում եմ, դա գալիս է այն օրից, երբ Հայրս մե-

ռաւ: Ձէի ընդունում նրա յանկարծակի Հեռացումը եւ ես պատասխանեցի այդ Հեռացումին՝ -ձեզ Հնարաւոր չպիտի լինի որդուն էլ Հեռացնել, ես մի բան պիտի անեմ: Գրականութիւնը ընտրելուց առաջ ես ուսումնասիրեցի այն աճէնն, ինչ ժամանակը չի կարող աւիրել՝ արձաններ, նկարներ, երաժշտութիւն: Ես Հասկացայ, որ միակ բանը, որ կարող է դիմանալ ժամանակին, դա յարարերական գեղեցկութիւնն է եւ ճշմարտութիւնը»:


Այդ ճշմարտութիւնն ու գեղեցկութիւնը նա գտնում է միայն ստեղծագործութեան մէջ եւ ամբողջովին նուիրում գրականութեան:

Առաջին յաջողութիւնից յետոյ, 1935ին նա մեկնում է Եւրոպա, այնտեղից Սովետական Հայաստան, յետոյ այցելում նաեւ Արեւմտահայաստան, լինում իր գերդաստանի բնօրրանում, Պիթիսում: «Քաղաք աւերակ էր, միայն բերդն էր կանգուն», պատ-

մում էր նա: Գտնում է իրենց տան բղկտուած աւերակը: Իրենն ուղեկցող քուրդից խնդրում միանակ թողնել իրեն ու այդ աւերակների մէջ միայնակ վերապրում է իր ժողովրդի, իր գերդաստանի ապրած սարսափելի արհաւիրքը. արսան ձայնով կապում Հարագատ Հողին, մինչեւ իսկ որոշում է մնալ այնտեղ: Մեծ մօր՝ Լուսնթագ Ղարաօղլեանեանի շնորհիւ, որն անդադար պատմել է Հայութեան մասին, նա պահպանել է իր վառ Հայկականութիւնը. մանրամասն տեղեկութիւններ է ունեցել իր գերդաստանի ծննդավայրից ու իր արմատներից: «Իմ մեծ մայր, - պատմում էր Սարոյեանը. - Ամերիկայի մէջ այ Պիթիս կ'ապրէր: Ան առանձին Աստուած ունէր, կրօն չէր գիտեր, անոր աստուած ուրիշ էր: Ան աճէնն շատ մարդու խելքին ու գութին կը Հաւատար ու չէր վՀատիր ու յուսահատիր»: Եւ շնորհիւ իր այդ մեծ մօր ու Հիմնականում իր մէջ եռացող նախնիների արեան Հոսքի, նա երբեք չի քողարկել կամ Հեռացել իր ազգութիւնից: Քաջատեղեակ լինելով ոչ միայն Համալսարհային մշակոյթին, այլ նաեւ Հայ դարաւոր մշակոյթին, Հպարտ է զգացել իր Հայութեամբ եւ աճէնուրեք յայտարարել է՝ «Իմ ինքնութեան մասին չեմ կարող մտածել Հայութիւնից դուրս: Այն ինձ Համար այնքան Հիմնական է, որքան կեանքի կայծը: Ես Հայ եմ եւ բոլորը արդէն գիտեն: Ծիչդ է զժուար է, միեւնոյն ժամանակ ի՞նչ Հրաշալի բան է Հայ լինելը»: Նա ոչ միայն չի քողարկել իր ազգութիւնը, այլ աճէնուրեք ապրել ու մտածել է որպէս Հայ, կեանքում եւ գրականութեան մէջ:

«Երբ մէջս առաջին անգամ գրելու պահանջ զգացի, ուղեցի պարզել թէ ոսկի՞ց կու գամ, ո՞վ եմ ես, ի՞նչ կ'ուզեմ բան: Գեո այն ատեն Հասկացայ, որ մինչեւ չգիտեամ թէ ով եմ ես, չեմ կրնար գրել: Ու Հասկնայով, որ Հայ եմ, Պիթիսէն կու գամ, դաւակն եմ Արմենակ եւ Թագուհի Սարոյեաններու, սկսայ գրել»: Հասկանալով, որ մեծ մշակոյթով ու մեծ անցեալի տէր, Հին ժողովրդի գաւակ է ինքը, իր պարտքն է Համարում Հետեւել իր արմատներին:

1939թ. սկսում է թատերգութեան իր փորձերը, գրում «Ձեր Կեանքի ժամանակը», որով մեծ նորարարութիւն էր բերում ամերիկեան թատրոն: Այս գործի Համար նա արժանանում է գրական «Փոլիցրը» մրցանակին, սակայն մերժում է ընդունել, յայտարարելով, որ ինքը դեմ է Հարուստների կողմից արուեստը Հովանաւորելու երեւոյթին: Այդ շրջանում նա այնքան է տարւում թատրոնով, որ առաջին թատերախաղին Հետեւում է «Իմ Սիրտը Լեռներում է», «էյ, Ո՞վ Կայ Այդտեղ», «Կոտորածն Մանկանց», «Սովեակները», «Փինկ-Փոնկ Ռադացողները», «Հերոսացած Մի գնայ», «Քարանձախ Բնակիչները» եւ ուրիշներ... Նա նոյնիսկ փորձում է Հիմնել իր՝ սարոյեանական թատրոնը, ինքը բեմադրում ու տոնսակներ է բաժնում «Գեղեցիկ Մարդիկը» թատերախաղի Համար: Սակայն այդ թատերախաղի նիւթը չյարմարուելով Պրոտուէլի ճաշակին, յաջողութիւն չի գտնում: Ամերիկեան



Ուիլերմ Սարոյեան

Լուսանկարը՝ Փոլ Գալինեանի

Թատրոնը, որը հիմնուած էր սովետական ճաշակի վրայ, շուտով ձանձրանում է սարոյեանական մարդկային բարութիւնից ու լատատեսութիւնից: Որքան էլ նա նորարարութիւն էր բերել ամերիկեան թատրոնին, այնուամենայնիս ամերիկեան թատրոնում նրա գործերը կարճ կեանք են ունենում: Դրանք աւելի շատ բեմադրում են աշխարհի այլ երկրներում: Իր թատերգութիւններից շատերը և յատկապէս «Ձեր կեանքի ժամանակը» թատերգութիւնը մինչև այսօր էլ իր տեղը ունի Համաշխարհային թատրոնի խաղացանկում Չեխովի, Իբսենի, Օ'Նեյլի կողքին որպէս դասական գործ:

Պատերազմի տարիներին նա ծառայում է Եւրոպայում: Իր նման բարութեամբ ու մարդասիրութեամբ շնչող մի Հսկայի Համար անասելի դժուար էր պատերազմի ողջ կոպտութիւնը, սպանդը և անարդարութիւնները բնորոշելը: Առաջին պատերազմին նա կորցրել էր իր սիրելի եղբորը և իր Համար պատերազմը մահն էր խորհրդանշում: Այդ տարիները իր կեանքի ամենածանր ու մղձաւանջային շրջանն է լինում, որը Հետագայում 1944թ. վերաբրտարել է «Ուէլլի Ջէյքսոնի Արկածները» վէպում ուր նկարագրում է պատերազմի բերած սարսափներն ու արհաւիրքները: Նա պատմում էր Հետեւեալը՝ «Եղաւ, որ խենթացայ: Պատերազմի ատեն էր: Երեսուներկու օրէն

«Ուէլլի Ջէյքսոնի Արկածները» գրեցի ու խենթացայ: 72 ժամ խենթ եղայ... մարդ չգիտցայ: Ես ու իմ աստուած կոտեցանք ու ևս յաղթեցի: Ոչ, իմ աստուած յաղթեց, իմ աստուած ևս եմ: Ամենամեծ խայտառակութիւն, ամենամեծ չարիքն է պատերազմը: Պատերազմէն վերջ տարի մը տող մը չգրեցի: Սակայն յամառութիւնս յաղթեց: Մենք Հայերս ունինք այդ յամառութիւնը»:

Աէրը անմահ է, ատելութիւնն է, որ մեռնում է ամէն վայրկեան, այս էր Սարոյեանի Հետելութիւնը պատերազմի ահաւոր ատելի կողմը տեսնելուց յետոյ, որը ևս դառնում է իր կեանքի և գրականութեան փիլիսոփայութիւնը:

Ետպատերազմեան Ամերիկան ոչնչով չէր տարբերում պատերազմի արհաւիրքով լեցուն օրերից: Սկսուել էին Մակրարտիզմի տխրահոշակ տարիները, երբ առաջադէմ մտաւորականութիւնը կեղծ ու շինծու մեղադրանքներով նետում էր բանտերը:



Իրեն էլ բաժին է Հասնում այդ մեղադրանքներից, որովետե նա այցելել էր Սովետական Միութիւն: Այդ շրջանում նա գրում է «Կոտորածն Մանկանց» թատերգութիւնը, ուր յստակօրէն դրսևորում էր նրա վերաբերմունքը Մակրարտիզմի դէմ, որով մեղացնում էր ամերիկեան վարչակարգի դատապարտելի կողմերը: Թատերգութեան մէջ դատարանի վերածուած ճաշարանում դատում են ամենատարբեր տարիքի ու մասնագիտութեան տէր մարդկանց: Բոլորի դատավճիռն էլ նոյնն է՝ գնդակահարութիւն: Եւ այդ սոսկալի միջավայրի մէջ դատապարտուածներից մէկի վերջին ցանկութիւնն է լինում նորից ծնուել, նոր կեանքով ապրելու Համար: Սա տիպիկ Սարոյեանական պատկեր էր և միեւնոյն ժամանակ այդ շրջանի տրուած ամենատխուր պատկերը, ուր յոյսը դեռ կենդանի էր լաւ կեանքի Համար: Սարոյեանը չէր գունատուում: Դա մարդկութեան յաղթութեան ուժն ու Հաւատն է եղել միշտ և ամէնուրեք:

1958ին, երբ Պրոտուէլլի մէջ ներկայացուեց իր իւրօրինակ թատերգութիւններից մէկը՝ «Քարանձախի Բնակիչները», բնագատներն այն որակաւորում են իրրեւ քաղցրացրած գոյապաշտութիւն: Գործողութիւնը կատարվում էր քանդման ենթակայ մի կիսաւեր թատրոնի մէջ, որը նախկինում կոչուել է «Աչ» (Ճար. 18րդ էջ)

(Ուար. 15րդ էջ. 6)

խարհ»: Թատերգութեան Հիմնական գործող անձերը այդ աւերակներէ մէջ ապաստանած ծեր դերասաններ են, Թագուհին և Թագաւորը, որոնք վատ յուշեր ունեն այս վայրից: Տխրութիւնն ու ցաւն է Հիմնականում իրենց մէջ այս թատրոնից մնացել և նրանք լքում են այս կացարանը, որը շուտով կործանուելու է: Նրանք լքում են այդ շինութիւնը այն Հաւատով ու յոյսով, որ թերևս բարեկարգուած մի յուսաւոր թատրոն բարձրանայ նոյն տեղում:

Սարոյեանը այստեղ էլ իրեն յատուկ խորութեամբ այլարանօրէն աւերակներից բարձրացնում է մեր այս աշխարհը, որը լեցուն է ցաւերով ու անարդարութիւններով, ուր իւրաքանչիւրս մեր դերները խաղում ու Հեռանում այն Հաւատով ու յոյսով, որ ապագան տակի լաւ ու գեղեցիկ է լինելու: Այս յաւատաստութիւնն էր, որ չէին ընդունում ամերիկեան քննադատները: Եւ նա այդ քննադատներին պատասխանեց իր թատերախաղի ներածականով. «Փոյթ

չէ, որ կը մեղադրուիմ մարդկային ցեղը շատելուս Համար: Այնքան ժամանակ, որ այդ ցեղին մաս կը կազմեմ, նրան տակով մեղանշած կը լինեմ թէ ընտելեան և թէ ճշմարտութեան Հանդէպ»:

Իր կեանքը երբեք Հանդարտ չի ընթացել: Երկու անգամ բաժանուել է միևնոյն կնոջից և կրկին ամուսնացել նոյն կնոջ Հետ, բայց որ ինչպէս ինքն էր արտայայտուած՝ «Հայր չի սիրեր իր բոյնը քանդել: Ունեցել է երկու գաւակ՝ տղայ և աղջիկ: Տարուել է թղթախաղով, ձիարշաւով, խմիչքով, բայց դարձանալիօրէն այս ամէնի Հետ միաժամանակ նա անդադար ամէն օր ստեղծագործել է, մարդկութեանը ջերմացնելով իր գործերով: Տուրքերի պատճառով Հեռացել է Ամերիկայից, ապրել Փարիզում: Ճամբորդել է աշխարհով մէկ, կրկին ու կրկին այցելել Հայաստան, կապուել նրան, ոգևորուել նրա վերելքով: Այն Հարցին, թէ արդեօք ճշմարտութիւնը փնտռելու Համար է այդքան ճամբորդում, նա պատասխանել է՝ «Ճշմարտու-

թիւն... ճշմարտութիւնը ևս գտել եմ, գիտեմ... Ես աւելի լաւ բան եմ փնտռում... Ես ամէն ինչ գիտեմ այս աշխարհի մասին՝ չարիք, թշուառութիւն, ատելութիւն, վախ, կեղտոտութիւն և փտութիւն... Թող այդպէս լինի: Ես սիրում եմ այս աշխարհը այնպէս՝ ինչպէս կայ»:

Կեանքն այսչափ գնահատող ու սիրող մարդը, քաղցկեղով Հիւանդանալով, 1981թ. Մայիս 18ին, 73 տարեկանին մահանում է Ֆրեդնոյում, իր ծննդավայրում, յայտարարելով, որ թէպէտ մահը բոլորինն է, բայց ես Համոզուած էի, որ բացառութիւն եմ լինելու, բայց...»:

Մէկ տարի անց նրա աճիւնի մի մասը ըստ իր կտակի փոխադրուում է Հայրենիք և թաղում Կոմիտասի անուան դրօսայգու պանթէոնում, իր սիրելի Կոմիտասի կողքին, 1982 Մայիս 29ին: Իր ժողովրդի ճակատագրի պէս իր մարմինն էլ կիսուած, բաժանուած Հանգչում է իր պաշտած Հողում, իր պաշտած ժողովրդի Հայեացքի ու շնչի տակ: Հրաշալի է գրել բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանը՝


«Դու ասում ես՝ իրողութիւնը Հենց սա է, որ կայ, Իմ բարեկամներ, իմ մարդասէրներ, դուք մի բարեկամար, Կիսուած է Հողս, կիսուած է կեանքս, ճակատագիրս, Ուրեմն ահա, կիսեցէք նաև սիրտս, մարմինս...»

20 տարի է անցել անցեալ՝ 20րդ դարի, նշանակալից և անկրկնելի այս գրողի մահից, որը մարդկութեան Հետ կիսեց իր անսահման բարութիւնն ու յաւատաստութիւնը, որը փորձեց իր գործերով փոխել աշխարհում տիրող ցաւն ու անարդարութիւնը, տգեղն ու չարը: Գրող, որը աշխարհին պարտադրեց սիրել ու գնահատել Հայի միտքն ու Հոգին: Իր պատմութեանը մի փայլանքով, թատերգութիւններով խօսեց անհատի, ընտանիքի, տոհմի, ազգերի ու ժողովուրդների մասին, որը կոչում է երկրագնդի մարդկութիւն:

«Մարդ ձգտում է պատկանել այնպիսի մի գերդաստանի, որն ազնիւ է, խելօք, պատուարժան, նրբակիրթ, գեղեցիկ, Հարուստ, անուանի: Բայց ամէն անգամ պարզում է, որ նրա գերդաստանը այդպիսին չէ: Իմ դարմիկ Հայկը, երբ միասին թերթ էինք վաճառում, մի օր Ջորջ Ռիքսսի այն Հարցին, թէ ի՞նչ է իր ազգութիւնը, պատասխանեց, որ ամերիկացի է: Երէկ իրիկուն կոուել եմ Հօրս Հետ ու ձեռք եմ քաշում Հայութիւնից՝ ասաց Հայկը: Բայց մի քանի օր յետոյ ասաց, որ նորից Հայ է, որովհետեւ Հայրն ու ինքը Հաշտուել են արդէն:

«Մարդու յարաբերութիւնները ընտանիքի Հետ միայն սիրուց ու բերկրանքից չեն կազմուած: Ու ես որոշեցի յանձնին ինձ տեսնել մեր ողջ գերդաստանը, Հասկացայ, որ շատ բան չեմ կարող անել գերդաստանիս միւս անդամներին փոխելու, աւելի կատարեալ դարձնելու Համար, վճռեցի Հնարաւոր ամէն ինչ անելով՝ ինքս ինձ աւելի կատարեալ դարձնել: Երբ դադարեցի որևէ մէկից սպասելիքներ ունենալ, բացի ինքս ինձից, սկսեցի ամէն մէկի մէջ բաղձաթիւ արժանիքներ տեսնել: Ոչ-որ չպէտք է պահանջներ ունենայ Հօրից կամ մօրից, եղբորից, քրոջից, կնոջից, որդուց կամ աղջկանից: Մարդ պիտի պահանջներ ունենայ միայն ինքն իրենից, իսկ միւսներին վերաբերուի Հասկացողութեամբ ու սիրով...»:

Այս վերաբերմունքը ընդհանրացնելով, դարձնելով Հասարակարգի, ազգերի ու երկրների փոխ-յարաբերութիւն նա փորձեց կեանքի ճիշդ ըմբռնման ու շարունակման իմաստուն բացատրութիւնը տալ: Ինչպէս կեանքում, այնպէս էլ գրականութեան մէջ նա փորձեց պարզ լինել, տեսնել այն առօրեայ մանրութիւնները, որը ապրում ենք առանց բառերի վերածելու, առանց այդ բոլորի խորքը թափանցելու և որ ամենակարեւորն է՝ նա փորձեց կեանքը վերաբարձրել այնպէս ինչպէս կայ, իր պարզ պատկերով: Ահա թէ ինչ է նա գրել իր «Մարդկային Կատակերգութեան» ստաջարանում մօր Համար՝ «Վաղուց էի պատրաստուած մի փայլակ գրել յատուկ քեզ Համար: Ես ուզում էի, որ այն լինէր յաւագոյնը, որ երբեւէ կարողանա-



Ուիլեյմ Սարոյեան

Լուսանկարը՝ Փոլ Գալինեանի

ու էի գրել: Յուսով եմ, որ շուտով մէկը այն կը թարգմանի հանրէն, որ դու կարդաս: Դու կը կարդաս ու ես կ'ունենդրեմ քեզ քեզ կը սքանչանամ մեր լեզուի գեղեցկութեամբ, որն այնքան քիչ է անօթ ուրիշներին եւ որը քեզից բացի ոչ ոք գիտի գնահատել: Եւ քանի որ դու չես կարող կարդայ ու հիանալ անգլերէնով այնպէս, ինչպէս կարդում ու հիատում ես հայերէնով, եւ քանի որ ես բոլորովին չեմ կարող ո'չ կարդայ եւ ո'չ էլ գրել հայերէն, ապա մենք մեր յոյսը պիտի դնենք միտ թարգմանչի վրայ: Յամենայն վէպս այս վիպակը քեզ համար է լրուած: Յոյս ունեմ, որ կը հասնես: Գրել եմ Հնարատրին չափ պարզ, լրջութեան ու զուարթութեան այն շաղախով, որ յատուկ չ'մեր բնութանքին եւ յատկապէս չ'ուղ: Գիտեմ այստեղ ամէն ինչ ի ասուած, բայց միեւնոյն է քեզ անպայման պիտի թուայ, որ այնտեղ ամէն ինչ է ասուած, քանի որ այն գրել է քո որդին»:

Մարդ զարմանում է, թէ ինչպէ՞ս ծնուած ու մեծացած լինելով ամերիկեան մակերեսային բջապատում նա կարողացել է սմբոնել ծնողի, ընտանիքի ներքին խորը կապը, տարրեր տարրերի ու նկարագրի մարդկանց իոխ-յարարերութիւնը, բազարային ու արուարձանային մթնոլորտի տարրերութիւնը եւ այդ բոլորի կողքին տարրերութիւնը հայ լոգոս ու բնատրութեան:

Արդէն կարելի է պատկերացնել ծագումով մի հայ գրողի որքան դժուար պիտի լինէր այդ տարրերին ամերիկեան գրականութեան մէջ անուն հանելը, երբ Հեմինգուէյ, Ուիտման, Ֆոլքեր, Աթալայէկ հսկաները կային, որոնք իրենց ոճով ու ասելիքով ուղղութիւն ու ազդեցութիւն էին դարձել: Եւ նրանց կողքին յան-

ճգմուած ազգի ներկայացուցիչ, որը իր ազգի՝ հայի, աչքերով ու սրտով էր դիտում ու վերարտարում աշխարհը, որը խօսում էր, ոչ թէ գրում, որն ասում էր ամերիկեան հասարակական ներքին կառոյցին բոլորովին հակառակ բաներ: Ասում էր՝ երեխաներ, մի՛ հեռացէք ձեր ծնողներից, ընտանիքից, մարդու ստեղծած ամենահրաշալի անկիւնն է այն: Մարդ ապրիր շիտակ: Մահ իմ երկիրը մի՛ գնա, ցաւ մի՛ պատճառէք ծնողներին»:

Նա անսահման բարութիւն էր թելադրում մարդկութեանը: Այս ամէնով էր, որ նա ոչ միայն ընդունուեց գրական այդ բարդ աշխարհում, այլեւ տեղ գրաւելով կարողացաւ նաեւ յեղափոխել այն: Իր գործերը թարգմանուեցին աշխարհի տարրեր լեզուներով, միջեւ այսօր էլ խաղացում ու նկարահանում են տարրեր երկրներում, ամէնուրեք սփռելով իր անաղարտ սէրը մարդկութեան ու կեանքի հանդէպ:

Մարոյեանի համար գրել նշանակում էր ապրել եւ ի վերջոյ իր համար գրելն ու ապրելը դառնում են մի ամբողջութիւն կեանք անուան մէջ:

Ինչի մասին էլ խօսեց, այն կապեց կեանքի երեւոյթներին, շրջապատին եւ ընդհանրացնելով դարձրեց մարդկութեանը հետաքրքրող ու յուզող հարցադրում, խնդիր: Այդ է պատճառը, որ նրան հասկանում են ու ընդունում տարրեր տարիքի, տարրեր ազգերի մարդիկ համահասարակ:

«Մայրիկ, երէկ գիշեր, աշխատանքից տուն գնալու ճանապարհին, յանկարծ սկսեցի լաց լինել: Դու գիտես, ես երբեք լաց չեմ եղել, նոյնիսկ երբ փոքր էի, նոյնիսկ դպրոցում: Ես միշտ ամաչել եմ լաց լինելուց: Բայց երէկ

մաչեցի իմ լացից: Եւ որովհետեւ հեկեկում էի, հեծանիւս քշեցի քաղաքի միջով: Ճանապարհին անցայ մի տան մօտով, ուր երէկ երեկոյեան մարդիկ ուրախանում էին, իսկ այսօր տունը մութի մէջ էր: Ես այդ մարդկանց մի հեռագիր էի տարել: Դու գիտես պատերազմի այս օրերին ինչ տեսակի հեռագիր կը լինի դա: Ես վատ զգացի այդ մարդկանց ցաւի համար եւ աղօթեցի, որ նրանց ոչինչ չպատահի: Կարծում էի, որ մարդերեք չի լացում չափահաս դառնալուց յետոյ, բայց պարզում է, որ հենց այդ ժամանակ է մարդն սկսում լաց լինել, որովհետեւ այդ ժամանակ է նա սկսում հասկանալ ամէն ինչ», այսպէս է ասում Հոմերը իր մօրը «Մարդկային կատակերգութեան» մէջ:


Շատ քչերն են, յատկապէս ամերիկեան գրականութեան մէջ, կեանքը ըմբռնում ու բացայայտում այն տեսանկիւնից, ինչպէս Մարոյեանն էր հրամցնում: Իր մէջ այնքան շատ է եղել հայ ոգին, ամէն ինչ մանրամասնօրէն զգալու, ականջալուր լինելու եւ այդ բոլորը բացայայտելու, որ իր գործերը կարդալիս կարծես կեանքի էջ ես թերթում եւ ոչ թէ գրականութիւն: «Ի՛նչ գեղեցիկ է կրակարանի մէջ վառուող կրակը այն մարդու համար, որ նրա մօտ նստած այն կը դիտէ ու կը լսէ: Եւ որքան քաղցր են ամէն տեսակ փսփսուքները, որոնք

լեզուի փսփսուքներով ծնունդ ու սպառում են կրակի մէջ: Այդ նոյն կրակի մէջ կրնաք գտնել պատասխանները կեանքի եւ արուեստի առեղծուածի. ինչպէ՞ս կը մեռնինք, ինչպէ՞ս կ'ապրինք»:

Իր հսկայ մարմնի մէջ զարմանալիօրէն այնքան բարութիւն, մանկան մաքրութիւն էր տեղադրել բնութիւնը, որ զգալով հանդերձ «ինչ որ մի տեղ մի բան սխալ է», նա կրկին սէր ու լատեսութիւն էր բաժանում, բարութիւն ու համեստութիւն սերմանում:

Այս զարմանալի գրողը ամենապարզ բառերով ներկայացրեց մահն ու նրա գործած ազդեցութիւնը: Տասներեք տարեկանին, հեռագրատան ցրիչ աշխատելիս նա ստանում է իր հարազատ եղբոր մահուան հեռագիրը, որը ցնցել է նրան հիմնովին: Այդ վիշտը նա կրել է իր հետ մինչեւ կեանքի վերջը եւ շատ յաճախ անդրադարձել դրան: «Ես ուզում եմ տեսնել եղբորս, խօսել նրա հետ, զգալ նրա ներկայութիւնը, զգալ նրա ազնիւ շունչը եւ ժպիտը: Ուզում եմ միասին վայելենք այս կեանքը, որը տրուած է հաւասարապէս բոլորիս...», այսպէս պիտի ասի նա Հոմերի բերանով իր «Մարդկային կատակերգութեան» մէջ: Նա չէր ցանկանում ցաւած տեսնել որեւէ ազգի, որովհետեւ դեռ իր մէջ մխում էր

(Շար. 27րդ էջ)



տալիս չարից պաշտպանուելու
դասը խորհուրդներ էլ տալ միա-
ժամանակ: Իր «Գեղեցիկ սպիտակ
ձիու ամառը» պատմուածքում
ասորի ագարակապանը երբ
սկսում է ողբալ իր ձիու կորուս-
տը, Հայր նրան յանդիմանում է
ասելով՝ «Ամբողջ Հայրենիք ենք
կորցրել, դու քու ձիուդ Համա՞ր
ես լալիս»: Իր երկրի կորուստը,
Հայութեան ճակատագիրը միշտ
իր ստեղծագործութիւնների խոր-
քում է եղել, նրանով է թրծել իր
մտքերը, իր զգացումները: Ահա
թէ ինչու դրանք սրտամօտ ու բն-
դունելի են բոլորին, որովհետեւ
ապրուած, զգացած Հոգու թելե-
րով են հիստուած դրանք:

Միջահասակից բարձր, թիկնեղ,
Հայկական դիմագծերով, թաւ,
ոլորուն բեղերով, խաժ, խորունկ
աչքերով, զրնգուն, թաւ ձայնով,
փարակիչ կեանքայնութեամբ ու
յորդուն բարութեամբ օժտուած
այս Հսկան աշխարհի տարածքով
մէկ տարաւ իր ազգութիւնը, իր
ազգի Համբար եւ որքան էլ փոր-
ձեցին տարրեր Հարցումներով

մէկ շարաթ, երկու շարաթ, մէկ
ամիս: Շորերը կը մաշին, ինք կը
մազոտի, կը նիհարի, բայց դեռ կը
չարունակէ չալել: Վերջը թագա-
ւորը կու գայ ու կ'ըսէ՝

- Սղույ, կը տեսնես, որ աղջիկս
քեզի չի սիրեր, անօգուտ գործ ես
բռնեք, ինչո՞ւ դուր տեղը կը
տանջես քեզի: Գնա՛ տուն, Հան-
գիատ բրէ:

- Թագաւորն ապրած,- կը պա-
տասխանէ երիտասարդը,- կարե-
ւոր չէ թէ քու աղջիկը կը սիրէ
թէ ոչ, կարեւորը այն է, որ ես
իրեն կը սիրեմ ու պիտի սիրեմ:

- Հիմա իմն ու Արարատինն է:
Վերջապէս իր պաշտելի Արարա-
տի Հայեացքի առջեւ նրա ննջող
կէսը միախառնուում է իր էութեանը
սնունդ տուած այդ նոյն
լեռան գաղաթի ձիւնին ու ձուլ-
ուելով նրան, նրա պէս Համբե-
րութեամբ սպասում է իր Հայրե-
նական Պիթիխի եւ իր պաշտած
լեռան ազատագրմանը:

Սան Ծրանսիսկօ
10 Նոյեմբեր, 2001